



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

''19'' հուլիս 2013 թ.

թիվ 21-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ՔԱՂԱՔԱՅԻՆ/ԳՅՈՒՂԱԿԱՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ
ՏՎՅԱԼՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել՝

1. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում համայնքներում (քաղաքային/գյուղական) տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 1-ի:
2. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում գյուղական համայնքների տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 2-ի:
3. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում համայնքներում (քաղաքային/գյուղական) տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 3-ի:
4. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում գյուղական համայնքների տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 4-ի:
5. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակների կազմման և ընդունման ցուցումները՝ համաձայն հավելված 5-ի:

| | Գյուղական համայնքի անվանումը | Բնակավայրերի քանակը | Դրանցում հաշվառվել են | | | | Համայնքում գտնվող քիմիկատարողական հիմնարկների գործամասերի, մանկա-տների, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, ուսումնական հաստատու-թյունների, գիտավորձարարական ստորաբաժանումների, եկեղեցիների, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսության առևտրային կազմակերպությունների և /կամ դրանց մասնաճյուղերի քանակը |
|-----------------|------------------------------|---------------------|-----------------------|------------------------|------------------------|--|---|
| | | | այլ բնակատեղեր | տնտեսություններ, որից՝ | | | |
| | | | | հաշվառված և բնակվող | հաշվառված, բայց բացակա | հաշվառում չունեցող, բայց տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողեր ունեցող | |
| 1. | Ա. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | |

| <i>h/h</i> | Տարածաշրջան | Ցուցակագրման տեղամասերի քանակը | Կազմված ամփոփագրերի քանակը (Ձև թիվ 1-Աղյուսակ 1) | Կազմված ցուցակների էջերի քանակը (Ձև թիվ 1-Աղյուսակ 2) | Ընդամենը հաշվառվել են տնտեսություններ |
|-----------------|-------------|--------------------------------|--|---|---------------------------------------|
| <i>1.</i> | <i>Ա.</i> | <i>2.</i> | <i>3.</i> | <i>4.</i> | <i>5.</i> |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| Ընդամենը | | | | | |

Ձև թիվ 6-ամփոփ

**Կազմվում է ՀՀ ԱՎԾ
մարզային գործակալության կողմից**

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր


գյուղական համայնքների ցուցակների տվյալների

Մարզ-----

| 1. | Ա. | 2. | 3. | Դրանցում հաշվառվել են | | | | 8. |
|----|----|----|----|------------------------|------------------------|------------------------------|--|----|
| | | | | այլ բնակա- տեղեր | տնտեսություններ, որից՝ | | | |
| | | | | | հաշվառված և բնակվող | հաշվառված, բայց բացակա | հաշվառում չունեցող, բայց տնամերձ և/կամ գյուղ. նշանակութ- յան հողեր ունեցող | |
| | | | | 4. | 5. | 6. | 7. | 8. |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Համայնքում գտնվող քրեակատարողական հիմնարկների գործունեության, մանկա-տների, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գիտափորձարարական ստորաբաժանումների, եկեղեցիների, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսության արևմտային կազմակերպությունների և /կամ դրանց մասնաճյուղերի քանակը

| 1. | Տարածաշրջանի անվանումը | Համայնքների քանակը | Բնակավայրերի քանակը | Դրանցում հաշվառվել են | | | | Համայնքում գտնվող քրեակատարողական հիմնարկների գործամասերի, մանկա-տների, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, ուսումնական հաստատու-թյունների, գիտափորձարարա- կան ստորաբաժանումների, եկեղեցիների, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող գույրատնտեսությամբ առևտրային կազմակերպությունների և /կամ դրանց մասնաճյուղերի քանակը |
|-----------------|---------------------------|--------------------|------------------------|------------------------|------------------------|------------------------------|---|---|
| | | | | այլ բնակա- տեղեր | տնտեսություններ, որից՝ | | | |
| | | | | | հաշվառված և բնակվող | հաշվառված, բայց բացակա | հաշվառում չունեցող, բայց տնամերձ և/կամ գյուղ. նշանակույթ- յան հողեր ունեցող | |
| 1. | Ա. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հավելված 5

Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2013 թվականի հուլիսի 19-ի թիվ 21-Ա որոշման

**ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական
համատարած հաշվառում**

Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

**ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ
ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ գյուղատնտեսական հաշվառում) նախապատրաստման հիմնական աշխատանքներից է տնտեսությունների ցուցակների կազմումը: Տնտեսությունների ցուցակներն **անհրաժեշտ են**.

- 1) համայնքների տարածքն ըստ հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի սահմանագատելու,
- 2) գյուղատնտեսական հաշվառման ընթացքում տնտեսությունների ընդգրկման ամբողջականությունն ապահովելու և կրկնակի հաշվառումը բացառելու համար:

2. ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման նախապատրաստման, անցկացման, տվյալների մեքենայական մշակման և էլքային աղյուսակների ստացման աշխատանքների **օրացուցային պլանով** սահմանված ժամկետներում հատուկ ընտրված և հրահանգավորված ցուցակագրողների կողմից ՀՀ Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզերի ընտրված համայնքներում կազմվում են **տնտեսությունների ցուցակները**՝ հատուկ այդ նպատակով աշխատանքներում ընդգրկված ցուցակագրողների և համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների կողմից:

3. Աշխատանքի կատարման ողջ պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) մարզային գործակալությունների (համապատասխան տարածքային բաժինների) պատասխանատուները:

4. Տնտեսությունների վերաբերյալ տվյալները ցուցակներում **անհրաժեշտ է** վերցնել գյուղերում՝ գյուղական համայնքում տնային տնտեսությունների հաշվառման՝ **Ձև թիվ 1 համայնքի գրքերից, իսկ քաղաքային համայնքներում՝ քաղաքապետարաններից:**

5. Տնտեսությունների ցուցակների կազմման, դրանց ընդունման և արդյունքների ամփոփման աշխատանքներն իրականացնելիս **անհրաժեշտ է** ղեկավարվել ՀՀ ԱՎԾ կողմից հաստատված **ցուցումներով և հրահանգներով:**

6. Սույն ցուցումները սահմանում են տնտեսությունների ցուցակների կազմման, ընդունման, վերահսկման և ամփոփագրերի կազմման կարգը:

**II ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ) ՊԱՐՏԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼԻՍ**

7. ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները **համայնքներում տնտեսությունների** ցուցակների կազմման աշխատանքների նախապատրաստման և իրականացման ժամանակահատվածում պարտավոր են տարածքային բաժինների պատասխանատուներին **ապահովել** ցուցակագրողների վկայականներով, անհրաժեշտ քանակությամբ Ձև թիվ 1 - Աղյուսակ 1, Ձև թիվ 1 - Աղյուսակ 2, Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 1 և Ձև թիվ 2 գյուղական- Աղյուսակ 2 ձևաթղթերով:

8. Տարածքային բաժինների պատասխանատուները տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքների նախապատրաստման և իրականացման ժամանակահատվածում պարտավոր են.

1) Համայնքների սխեմատիկ հատակագծի վրա.

- ա. ստուգել բնակավայրի սահմանում (սխեմատիկ հատակագծի վրա նախօրոք թաղամասերի ու զանգվածների բաժանված) թաղամասերի ու զանգվածների հերթական համարակալման ճշգրտությունը,
- բ. համայնքի տարածքը սահմանազատել ցուցակագրման տեղամասերի՝ ցուցակագրողի աշխատանքային նորմային համապատասխան,
- գ. մեկ ցուցակագրողի աշխատանքային միջին նորման սահմանված է քսանհինգ / տնտեսություն / օր, իսկ աշխատանքներն անհրաժեշտ է կատարել մեկ ամսվա ընթացքում՝ սկսած 2013 թվականի հոկտեմբերից: Աշխատանքային նորման կարող է տատանվել՝ կախված թաղամասերի (զանգվածների) կառուցապատման բնույթից և դիրքից: Ցուցակագրման տեղամասերը կարող են ընդգրկել ամբողջական թաղամասեր (զանգվածներ) կամ դրանց մի մասը:

Տարբեր թաղամասերի (զանգվածների) մասերից ցուցակագրման

տեղամասեր կազմել չի թույլատրվում:

- 2) Տնտեսությունների ցուցակները կազմելու համար հավաքագրել ցուցակագրողներ և հրահանգավորել նրանց:
- 3) Ցուցակագրողներին ծանոթացնել իրենց տեղամասերի սահմաններին՝ ճշտելով դրանք ցուցակագրման տեղամաս դուրս գալով:

4) Ցուցակագրողներին ապահովել ցուցակագրողի վկայականներով, տնտեսությունների ցուցակների կազմման վերաբերյալ հրահանգներով, անհրաժեշտ քանակությամբ Ձև թիվ 1 (Աղյուսակ 1, Աղյուսակ 2) ձևաթղթերով:

5) Ցուցակագրողներին ապահովել ցուցակագրման տեղամասի սխեմատիկ հատակագծով:

6) Անցկացնել յուրաքանչյուր ցուցակագրողի կազմած տնտեսությունների ցուցակների լրացման հրահանգով պահանջվող դրույթներին համապատասխանության (հատկապես աշխատանքի առաջին օրերին), ինչպես նաև դրանցում ամբողջականության ընդգրկման և ճշգրիտ ներառման ստուգումներ:

7) Ցուցակագրման տեղամասերում շրջագայության ժամանակ ցուցակագրողների կողմից սխեմատիկ հատակագծերում կատարած փոփոխություններն անցկացնել սխեմատիկ հատակագծերի մյուս բոլոր օրինակների վրա:

9. Հրահանգավորել ՀՀ մարզերի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարներին՝ համաձայն գյուղական համայնքներում բնակավայրերի (այդ թվում՝ դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի) և դրանցում տնային տնտեսությունների ցուցակների կազմման կարգի հրահանգի: Համաձայն վերջինիս՝

1) Գյուղական համայնքների ցուցակի (Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 1 ձևաթղթի) 1-ին սյունակում լրացվում է համայնքի մեջ գտնվող հիմնական բնակավայրի հերթական համարը, իսկ 2-րդ սյունակում՝ գյուղական համայնքի/գյուղական բնակավայրի կամ դրա տարածքում գտնվող այլ բնակատեղի անվանումը: Անհրաժեշտ է ստուգել նաև, թե մտցված են արդյոք այլ բնակատեղերի վերաբերյալ տեղեկությունները հիմնական բնակավայրերի վերաբերյալ տվյալների մեջ:

2) Ցուցակների կազմման ժամանակ տնտեսություններ չունեցող գյուղական բնակավայրերը նույնպես ներառվում են գյուղական համայնքների ցուցակների մեջ:

**III ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ

10. Ցուցակագրողներից և գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարներից համայնքների տնային տնտեսությունների ցուցակների ընդունումը կատարվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժինների պատասխանատուների կողմից՝ ցուցակագրողի կամ գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների ներկայությամբ:

11. **Տնտեսությունների ցուցակների ընդունման ժամանակ անհրաժեշտ է ստուգել.**

1) այն համայնքներում, որտեղ իրականացվել են սխեմատիկ հատակագծերով ցուցակագրաման աշխատանքներ՝ ցուցակներում թաղամասերի, փողոցների, նրբանցքների, հրապարակների և այլնի, տների ու շինությունների ընդգրկման ամբողջականությունը՝ համեմատելով դրանք քաղաքների սխեմատիկ հատակագծերի հետ, ինչպես նաև յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) և ցուցակագրման տեղամասի հանրագումարների ճշգրտությունը,

2) գյուղական համայնքների ցուցակներում բոլոր գյուղական բնակավայրերի ընդգրկման ամբողջականությունը՝ ներառյալ գյուղական համայնքի տարածքում գտնվող ծերանոցների, մանկատների, քրեակատարողական հիմնարկների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև յուրաքանչյուր բնակավայրի վերաբերյալ գրանցումների և դրանց համարակալման ճշգրտությունը:

12. **Տնտեսությունների ցուցակների ընդունման ժամանակ ուշադրություն դարձնել, որ.**

1) Ձև թիվ 1-Աղյուսակ 1 ցուցակները պարտադիր կազմված լինեն ըստ առանձին թաղամասերի (զանգվածների): Դրանք փողոցներով կազմած կարելի է ընդունել միայն բացառիկ դեպքում, երբ համայնքը բաղկացած է մեկ կամ մի քանի զուգահեռ փողոցներից: Համայնքների սահմաններում

թաղամասերի (զանգվածների) համարակալումը լինի միասնական հաջորդական համարներով:

2) Ճշգրտված սխեմատիկ հատակագծի վրա յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) համար կազմված լինի առանձին ցուցակ (**Ձև թիվ 1 Աղյուսակ 2**): Թաղամասի (զանգվածի) համարը, ինչպես նաև ցուցակի հասցեամասում դրա սահմանների նկարագրությունը պետք է համընկնի սխեմատիկ հատակագծի հետ:

13. Յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) ցուցակը պետք է համեմատել հատակագծի հետ, ցուցակում գրված բոլոր տները (շինությունները) պետք է համապատասխանեն դրանց փաստացի առկայությանը, իսկ գրառման հերթականությունը՝ հատակագծի և տեղանքի վրա դրանց ճիշտ տեղաբաշխմանը: Ցուցակների կազմման ժամանակ պետք է անպայման հաշվի առնել սխեմատիկ հատակագծում կատարված բոլոր փոփոխությունները և ուղղումները:

14. Ցուցակագրողի կողմից հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները հատակագծի հետ, ինչպես նաև փողոցների անվանումների ու տների (շինությունների) համարանիշերի անճշտության վերաբերյալ բոլոր դիտողությունները հարկավոր է ճշտել համապատասխան կազմակերպություններում և ուղղումներ մտցնել ցուցակներում ու հատակագծի վրա:

15. Ցուցակի յուրաքանչյուր էջում ստուգվում է տվյալների գրառման, տների (շինությունների), տնային տնտեսությունների ամբողջականությունն ու ճշգրտությունն ըստ հասցեների: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել ցուցակներում անկյունային տների (շինությունների) հաշվառմանը, որոնք պետք է գրվեն փողոցներից մեկում՝ այնտեղ, որտեղ տունը (շինությունը) պաշտոնապես նշվում է փոստային բաժանմունքում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային բաժնում:

16. Յուրաքանչյուր տան (շինության) համար պարտադիր ստուգվում է դրանցում բնակվող տնտեսությունների քանակի հարաբերակցությունը (բնակտարածքի և այդ տարածքում բնակվողների հարաբերակցության տրամաբանությունը):

17. Տների (շինությունների) ցուցակների ընդունման ժամանակ պետք է ստուգել յուրաքանչյուր ցուցակի հանրագումարների ճշգրտությանը:

18. Տների (շինությունների) յուրաքանչյուր ցուցակ (Ձև թիվ 1 -Աղյուսակ 2) ստուգելուց հետո ստուգվում է ցուցակագրողի կողմից Ձև թիվ 1 -Աղյուսակ 1-ում դրանց հանրագումարների հաշվման ճշգրտությունը և ամբողջությամբ ցուցակագրման տեղամասի հանրագումարների հաշվարկները:

19. *Գյուղական համայնքների ղեկավարներից գյուղական համայնքների ցուցակներն ընդունելիս հարկավոր է ուշադրություն դարձնել բոլոր գյուղական բնակավայրերի, դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի և տնտեսությունների քանակի հաշվառման ամբողջականությանը:*

20. Տնտեսությունների ցուցակների հանրագումարներն ամբողջությամբ՝ ըստ տարածաշրջանի (քաղաքային, գյուղական), հաշվելուց հետո՝ անհրաժեշտ է կատարել ցուցակում մտցված քաղաքային և գյուղական տնային տնտեսությունների քանակի մասին տվյալների վերլուծություն:

21. Եթե տնտեսությունների քանակի տվյալների վերլուծության արդյունքում հայտնաբերվի համայնքների ցուցակներում տնտեսությունների քանակի թերհաշվարկ (համեմատելով առկա այլ աղբյուրների հետ), ապա անհրաժեշտ է կազմակերպել կազմված ցուցակների վերստուգում:

22. Ցուցակներն ընդունելուց հետո հաշվարկվում են հանրագումարներն՝ ըստ քաղաքի և գյուղական համայնքների, այնուհետև ամբողջությամբ՝ տարածաշրջանի կտրվածքով: Համայնքների (քաղաքային/գյուղական) համար կազմված Ձև թիվ 1 – Աղյուսակ 1 ամփոփագրով ստացված տնտեսությունների և Ձև թիվ 2 գյուղականով ստացված տնտեսությունների քանակներն անհրաժեշտ է համեմատել տվյալ տարածքի տնտեսությունների հաշվարկային թվաքանակի տվյալների հետ:

Էական տարբերությունների դեպքում անհրաժեշտ է պարզել դրանց պատճառները, և եթե դրանք առաջացել են ցուցակների ոչ ճիշտ կազմման հետևանքով, ապա պետք է կատարել այդ ցուցակների մանրագնին ստուգում և ուղղում:

23. Ցուցակները ստուգելուց և ընդունելուց հետո ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատուները կազմում են ցուցակների տվյալների **ամփոփագրեր**:

24. ՀՀ ԱՎԾ կողմից սահմանված ժամկետում Ձև թիվ 1 տնտեսությունների ցուցակների և Ձև թիվ 2 գյուղականի ամփոփ արդյունքները տարածքային բաժինների պատասխանատուները

ներկայացնում են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություն՝ **Ձև թիվ 3 ամփոփ** և **Ձև թիվ 4 ամփոփ** ձևաթղթերով:

25. Ձև թիվ 3 ամփոփը կազմվում է «Համայնքներում (քաղաքային/գյուղական) տնտեսությունների ցուցակների տվյալների հիման վրա, որտեղ կատարվել են ցուցակագրողի կողմից ցուցակագրման աշխատանքներ: **Ձև թիվ 3 ամփոփը կազմվում է սխեմատիկ հատակագծերով ցուցակագրված բոլոր համայնքների համար՝ ցուցակագրման տեղամասերի կտրվածքով, սկզբում քաղաքային համայնքների, այնուհետև գյուղական համայնքների այբբենական կարգով գրառմամբ: Յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ տեղեկությունները գրառելուց հետո, առանձին տողով լրացվում է ընդամենը տվյալ համայնքում ամփոփ ցուցանիշները, այնուհետև անցնում մյուս համայնքի վերաբերյալ տեղեկատվության գրառմանն ու ամփոփմանը: Ձև թիվ 3 ամփոփ ձևաթղթում ներառվում են Ձև թիվ 1-Աղյուսակ 1-ի ամփոփ տվյալները՝ ըստ յուրաքանչյուր ցուցակագրման տեղամասի:**

26. «Գյուղական համայնքներում ցուցակների տվյալների ամփոփագիրը»՝ Ձև թիվ 4 ամփոփ, կազմվում է Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 1-ի հանրագումարային տվյալների հիման վրա:

27. Ձև թիվ 3 և Ձև թիվ 4 ամփոփագրերը լրացվում են 2 օրինակից, որից մեկը ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձը հանձնում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությանը, իսկ մյուս օրինակը՝ պահում իր մոտ:

**IV ՀՀ ԱՎԾ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ**

28. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման նախապատրաստման, անցկացման, տվյալների մեքենայական մշակման և ելքային աղյուսակների ստացման օրացուցային պլանով սահմանված ժամկետներում ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները, ամփոփելով համայնքների տնտեսությունների ցուցակների մարզի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան ամփոփագրերում, ներկայացնում են ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչություն՝ **ըստ 2և թիվ 5 ամփոփի և 2և թիվ 6 ամփոփի** ձևաթղթերի:

29. Համայնքներում տնտեսությունների ցուցակների տվյալների ամփոփագիրը՝ **2և թիվ 5 ամփոփի**, կազմվում է տվյալ մարզի բոլոր քաղաքների համար **ըստ 2և թիվ 3 ամփոփի**: 1-ին սյունակում քաղաքների գրառումները կատարվում են տարածքի կտրվածքով՝ **ըստ այբբենական կարգի**:

30. «Գյուղական համայնքներում ցուցակների տվյալների ամփոփագիրը»՝ **2և թիվ 6 ամփոփի**, կազմվում է տվյալ մարզի համար տարածքային կտրվածքով՝ **ըստ 2և թիվ 4 ամփոփի**: 1-ին սյունակում տարածքների գրառումը կատարվում է այբբենական կարգով: